ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի հոկտեմբերի 31-ի N 100-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի № 94-Լ ԵՎ № 95-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի «Հաշվեքննողների համար ներքին ծառայողական հարաբերությունների շրջանակում կիրառվող էթիկայի կանոնները հաստատելու մասին» № 94-Լ որոշման հավելվածի Ձև 1-ի (Հաշվեքննիչ պալատի հաշվեքննողների անկախության և գաղտնիության հայտարարագիր) 1-ին, 5-րդ և 7-րդ կետերից հանել «8-րդ մասով սահմանված» բառերը:

2. Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի «Հաշվեքննիչ պալատի անդամների գործունեությանն առնչվող՝ միջազգային իրավական պրակտիկայով պայմանավորված ուղենիշային չափանիշները հաստատելու մասին» № 95-Լ որոշման հավելվածի Ձև 1-ի (Հաշվեքննիչ պալատի անդամների անկախության և գաղտնիության հայտարարագիր) 1-ին, 5-րդ և 7-րդ կետերից հանել «8-րդ մասով սահմանված» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ **ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ**